Հաստատում եմ՝
Տնօրեն՝ ---------Ն. Ասատրյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմի
Գ. Բաղդասարյանի անվան միջն. դպրոց

3-րդ դասարան

Դասվար՝ Ս. Բաղդասարյան

2023-2024 ուսումնական տարի

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը):

Դասարանում սովորում է 6 աշակերտ՝ երեք տղա և երեք աղջիկ: Բոլորը կարդում և վերարտադրում են տեքստը: Կատարում են թվաբանական գործողություններ, գիտեն բազմապատկման և բաժանման աղյուսակը: Անցկացվել է դասարանական ժողով, ընտրվել է ավագ: Բոլորը ծանոթ են դպրոցական և դասարանական կանոններին, գիտեն իրենց իրավունքները և պարտականությունները: Բոլոր աշակարտներն ապահովված են դասագրքերով:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում:

- Կիրառել բոլոր մեթոդներն ու հնարները աշակերտների մեջ սերմանելու, մշակելու և զարգացնելու սեր դպրոցի, ուսման, դպրոցական կարգ ու կանոնի նկատմամբ:
- Սահմանել վերահսկողություն ուսումնական առաջադիմության և կարգապահության հարցերում:
- Ուշադրության կենտրոնում պահել երեխաների ռազմահայրենասիրական դաստիարակությունը
- Էքսկուրսիաների ու այցելությունների միջոցով ծանոթացումը ազգային ավանդական արժեքներին:
- Ամրապնդել ծնող-ուսուցիչ-աշակերտ փոխադարձ կապը:

3. Հայեցի դաստիարակություն:

3. 1 Հոգևոր դաստիարակություն: Զրույցների և պատմական փաստերի միջոցով ծանոթացնել Հայաստանում քրիստոնեության ընդունմանը: Գիտակցեն և գնահատեն ազգային տոները, մշակութային արժեքները, ծանոթանան հայկական շարականներին, հոգևոր երգերին:

3. 2 Գեղագիտական դաստիարակություն: Անձի լիարժեք ձևավորման համար շատ կարևոր նշանակություն ունի նաև գեղագիտական դաստիարակությունը: Երեխաների մեջ վեր հանել գեղեցիկն ընկալելն ու գնահատելը: Կազմակերպել այցելություն մշակութային օջախներ:

3.3. Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն: Հայրենասիրությունը հայրենիքի նկատմամբ սերն է:Այն ձևավորելուն կնպաստեն արիության դասերը, հայրենասիրական միջոցառումները, պետական խորհրդանիշների մասին գիտելիքների հաղորդումը:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն: Ուշադրություն դարձնել երեխաների ճիշտ

կեցվածքի ձևավորմանը, մեծ ուշադրություն դարձնել ֆիզպատրաստությանը: Դասերն անցկացնել աշխուժացնող խաղերով:

3.5. Աշխատանքային դաստիարակություն: Աշխատանքային դաստիարակության հիմքում դնել հանրությանը օգտակար լինելու գաղափարը: Դասարանում ունենալ ակտիվ, որը կգիտակցի իր պարտականությունները: Մշակել կանոնակարգ և հետևել կատարմանը:

3.6. Բնապահպանական դաստիարակություն: Դասարանում ունենալ բնագիտական անկյուն և անհրաժեշտության դեպքում հարստացնել: Աճեցնել ծաղիկներ, ունենալ «Կանաչ անկյուն» հետևել և խնամել եղածը, երեխաներին ծանոթացնել բնության մեջ կատարվող երևույթներին:

4. Դպրոց-ընտանիք կապը: Ունենալ ծնողխորհուրդ, սերտ կապ հաստատել յուրաքանչյուր աշակերտի ընտանիքի հետ, իմանալ աշակերտների անհատականության մասին: Ծնողներին մասնակից դարձնել կազմակերպվող միջոցառումներին:

ուսումնական շաբաթներ	**ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը**
1	Գիտելիքի օր: Առաջին զանգ: Անցկացնել ծնողական ժողով:
2	Ընտրել դասարանական ավագ:: Սահմանել հերթապահություն:
3	«Սուրբ խաչի տոն»:
4	ՀՀ անկախության օր:
5	Հարգել 44-օրյա պատերազմում զոհված բոլոր հերոսների հիշատակը: Զարգացնել ինքնուրույնություն և վստահություն:
6	Կազմակերպել ներդասարանական փոքրիկ դաս-միջոցառում՝ նվիրված ուսուցչի օրվան: Աշխատանքային դաստիրակության դերն ու նշանակությունը:
7	Բարեկիրթ շբում, հաղորդակցում:
8	Անցկացնել զրույց «Աշնան գույները» թեմայով:
9	Անցկացնել զրույց «Ի՞նչ է ընկերը, ընկերասիրությունը» թեմայով:
10	Իմ իրավունքները և պարտականությունները:
11	Գեղագիտական դաստիրակության դերն ու նշանակությունը:

12	Անցկացնել զրույց «Գիրքն իմ լավագույն ընկերն է» թեմայով: Ցերեկույթ:
13	Անցկացնել զրույց եղանակային փոփոխությունների վերաբերյալ: Զարգացնել տրամաբանություն:
14	Անցկացնել զրույց «Ձմեռը մեր գյուղում» թեմայով: Պատրաստվել Ամանորյա հանդեսի:
15	Առաջին կիսամյակի ամփոփում:
16	Մարդն իր գործով է ճանաչվում:
17	Զրույց «Հայոց բանակը» թեմայով: Ծանոթացնել երեխաներին ազգային հերոսների հետ:
18	Անցկացնել զրույց «Ջուրը որպես կյանքի աղբյուր» թեմայով:
19	Զրույց նվիրված գրքի տոնին: Ցերեկույթ նվիրված մայրենի լեզվին:
20	Անցկացնել զրույց «Լինենք առողջ ու արի» թեմայով:
21	«Բարև գարուն», զրույց եղանակային փոփոխությունների մասին:
22	Մարտի 8-ի բացիկների պատրաստում: Սիրենք և հարգենք մեր մայրերին:
23	Կարևորել ֆիզկուլտուրա առարկայի դերն ու նշանակությունը: Անցկացնել սպորտային խաղեր և վարժություններ:
24	Զրույց՝ նվիրված «Մայրության և գեղեցկության» տոնին:
25	Սուրբ զատիկ:
26	Ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
27	Զրույց՝ «Ընտանեկան սովորույթներն ու ազգային ավանդույթները»: «Իմ ամենասիրելի տոնը»/զրույց/:
28	Անցկացնել զրույց «Դպրոցը մեր երկրորդ տունն է» թեմայով:
29	Մաթեմատիկա առարկայի դերը տրամաբանության զարգացման համար:
30	Այց գյուղի բերդ-ամրոց: Պահպանենք մեր պատմամշակութային արժեքները:
31	Անդրադարձ՝ «Ինչ եմ սովորել երրորդ դասարանում»:
32	Աշխատանքը հաջողության առաջին պայմանն է:
33	Վերջին դաս:
34	Երկրորդ կիսամյակի ամփոփում: Հանձնարարություններ ամառային արձակուրդների համար: